

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
Նախնական գնահատման հայտ

Արմավիրի մարզի, Մեծամոր համայնքի Նոր
Արմավիր վարչական շրջանում նախատեսվող
խաղողի վերամշակման տնտեսության

Պատվիրատու՝

«ՌԻԴ» ՍՊԸ

<<Էկո Գրուպ ԱՄ>> ՍՊԸ տնօրենի կողմից հաստատված



Երևան 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն.....	3
1.2	Հապավումներ	3
1.3	Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը	4
1.4	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)	7
1.4.1	Նախատեսվող գործունեության նկարագիր.....	7
1.4.2	Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը	16
1.4.3	Նախատեսվող աշխատանքների կազմակերպում.....	25
1.4.4	Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ	26
1.4.5	Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ.....	26
	Նախատեսվող գործունեության տարածք շինհրապարակի կազմակերպման հատակագիծ ..	29
1.4.6	Կադրային ապահովում և շինտեխնիկա.....	30
1.4.7	Նյութերի և բնառեսուրսների օգտագործում	32
2.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ	35
2.1	ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.....	35
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	35
2.2	ԿԼԻՄԱՆ.....	37
2.3	Օդային ավազան	41
2.4	Ջրային ռեսուրսներ	42
2.5	Հողերի նկարագիրը	42
2.6	Հիմնային աշխատանքներ.....	43
2.7	Կենսաբազմազանություն	43
2.8	Թափոնների կառավարում	44
3	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	46
3.1	ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....	46
3.2	ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ.....	47
3.3	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....	47
3.3.1	ՄԹՆՈՂՈՐՏԱՅԻՆ ՕԴ.....	47
3.3.2	ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՄՆԵՐ	48
3.3.3	ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՄՆԵՐ	48
3.3.4	ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ	49
3.3.5	ԱՂՄՈՒԿԻ և ԹՐԹՌՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ	51
4.	ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ	52
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	54
	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ/ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ.....	57
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	45
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	46

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն	
1.2	Ձեռնարկող՝	«Ռիդ» ՍՊԸ
1.3	Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝	ք.Երևան, Ձորագյուղ 35
1.4	Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝	ք.Երևան, Ձորագյուղ 35
1.5	Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝	Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք

1.2 Հապավումներ

ՀՀ՝	Հայաստանի Հանրապետություն
ՓԲԸ՝	Փակ Բաժնետիրական Ընկերություն
ՍՊԸ՝	Սահմանափակ պատասխանատվությամ ընկերություն
ՊՈԱԿ՝	պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Նախատեսվող խաղողի վերամշակման տնտեսության գործարանի նախագիծը նախատեսվում է իրականացնել Արմավիրի մարզի Մեծամոր խոշորացված համայնքի Նոր Արմավիր վարչական շրջանի Մ.Մաշտոցի փողոց 30 և 30/1 հասցեներում:

Գործունեության նպատակն է կառուցել ժամակակից տեխնոլոգիաներով հագեցած խաղողի վերամշակման տնտեսության գործարան:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Նախատեսվող խաղողի վերամշակման տնտեսության գործարանի աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Իրավական հիմքերը

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթաօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Հողային օրենսգիրք (02.5.2001թ.),
2. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.6.2002թ.),
3. <<Թափոնների մասին>> ՀՀ օրենք (24.11.2004 թ.),
4. <<Վարչական իրավախախտումների մասին>> ՀՀ օրենք (07.02.2012թ.),
5. <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> ՀՀ օրենք (01.11.1994թ.),
6. <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենք (21.06.2014թ),
7. <<Բնապահպանական վերահսկողության մասին>> ՀՀ օրենք (11.04.2005թ),
8. << Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենք (30.05.2001թ),
9. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”
10. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման “Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին”
11. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին”
12. <<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա ապրանքների ցանկերը

հաստատելու, լիազոր մարմիններ սահմանելու եվ ապրանքների արտահանման եվ (կամ) ներմուծման լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման շրջանակային կարգը հաստատելու մասին»>> ՀՀ կառավարության 25.12. 2014 թ-ի N 1524-Ն որոշում,

13. <<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա որոշ ապրանքների ցանկերը, ապրանքների արտահանման եվ ներմուծման լիցենզիայի եվ հայտի ձեվերը հաստատելու, որոշ ապրանքների արտահանման եվ ներ-մուծման լիցենզիաների տրամադրման առանձնահատկությունները սահմանելու եվ Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 15-ի N 327-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»>> 05.02.2015 թ-ի N 90-Ն որոշում,

14. ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 121-Ն որոշում,

16. ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» N 430-Ն հրաման:

17. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը

18. ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 71-Ն որոշում

19. ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 72-Ն որոշում

20. ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 781 որոշում

21. ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում

22. Կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշում:

23. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 6 մարտի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին:

24. << քաղաքաշինության նախարարի հրամանը <<ՇՆ **22-04-2014** <<Պաշտպանություն աղմուկից>> Ծինարարական նորմերն հաստատելու և << քաղաքաշինության նախարարի **2001** թվականի հոկտեմբերի **1-ի N 82** հրամանում փոփոխություն կատարելու մասին:

1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.4.1 Նախատեսվող գործունեության նկարագիր

«Ռիդ» ՍՊ ընկերությունը նախատեսում է ՀՀ, Արմավիրի մարզի Մեծամոր խոշորացված համայնքի Նոր Արմավիր վարչական շրջանի Մ.Մաշտոցի փողոց 30 և 30/1 հասցեներում հիմնել խաղողագինեգործության համալիր: Գործարանի հզորությունը՝ տարեկան 50 հազար շիշ է, 6000 դեկալիտր, կամ 16,7 դեկալիտր/օր:

Նախագծի համար հիմք է հանդիսացել պատվիրատուի հայտը, անշարժ գույքերի սեփականության իրավունքի գրանցման 17082022-04-0049 և 17082022-04-0031 վկայականները, Արմավիրի մարզի Մեծամոր համայնքապետարանի կողմից 05.01.2023թ տրամադրված N03 ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Խաղողի վերամշակման տնտեսության նախագծային փաստաթղթերի պատրաստման համար որպես էլակետային տվյալներ և պայմաններ հանդիսացել են՝

- Երկրաբանական և երկրաֆիզիկական հետազոտությունների արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները;
- Հողատարածքի գեոդեզիական չափագրությունները, որոնց հիման վրա ճշտվել են հողամասի սահմանները;
- Ինժեներական գծերին և հաղորդակցուղիներին միանալու վերաբերյալ տեխնիկական պայմաններ;

Հողամասի բնութագիրը

Հողամասի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների: Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 9.6012 հա, այն, բաղկացած է երկու հատվածներից, որոնք իրենցից ներկայացնում են երկու բլրակ, առավելագույնը 15 մ բարձրությամբ, որտեղ նախատեսված է իրականացնել հիմնական կառուցապատումը:

Կառուցապատվող հողատարածքը շրջապատված է խաղողի և մրգատու այգիներով, ինչպես նաև վարելահողերով: Հողամասը ազատ է կառուցապատումից:

Կառույցի բնութագիրը

Խաղողի վերամշակման տնտեսությունը բաղկացած է վերամշակման արտադրամասից, տեխնիկական սարքավորումների համար տարածքներից, սրահներից, պահեստային տարածքներից, ադմինիստրատիվ և գրասենյակային տարածքներից, անձնակազմի համար կացարանից, պահակակետից:

-4.50 նիշում գտնվող մասնաշենքի կենտրոնական հատվածը երկհարկանի է, մանսարդային հարկով: Կից՝ աջ և ձախ թևերում նախագծված արտադրամասը և ցուցասրահը երկլույս են: Նշված մասնաշենքին ուղահայաց կենտրոնական առանցքի աջ և ձախ կողմերում նախագծված են եռահարկ կառույցներ: Կառույցների ստորին հարկերը ամբողջովին գտնվում են գետնի տակ և նախատեսված են պահեստային և օժանդակ սենյակների համար: Երկու վերգետնյա հարկերում նախատեսված են գրասենյակային և ադմինիստրանիվ տարածքներ:

Մասնաշենքերը միմիանց հետ կապվում են բացօթյա սրահներով, որոնց միջոցով համալիրի կենտրոնական մասի վերգետնյա հատվածում առաջանում է ներքին բակ: Կառույցի հատակագծային նիշը ընդունված է տարածքի 897.0 մ բաձարձակ նիշը: Հարկերի բարձրությունը նախագծված է 4.50 մ :

Կառույցի ճակատները նախատեսված է իրականացնել խամ քարե շարվածքով, ինչպես նաև երեսապատման համար նախատեսված է օգտագործել բարձրորակ քարե սալեր:

Համաձայն իրադրային սխեմայի 500 մ շառավղով շինություններ առկա չեն: Համաձայն համայնքի կողմից տրամադրված տեղեկանքի նշված տարածքը գտնվում է բնակավայրերից դուրս:

Տարածքի բարեկարգում

Նախատեսված է շենքի շրջակայքը բարեկարգել և կանաչապատել գյուղատնտեսական և պտղաբուծական բույսերի միջոցով: Ներքին բակերում նախատեսված են սիզամարգեր և սալապատում: Ավտոկայանատեղի, դեպի կառույց մուտքերի և ելքերի կազմակերպում:

Մեքենաների մուտքը և ելքը դեպի համալիր նախատեսված է կազմակերպել շրջանցիկ ճանապարհից դեպի համալիր տանող երկու ներքին ճանապարհների միջոցով:

Մեքենաների կայանատեղին նախատեսված է կազմակերպել կառույցի հյուսիս-արևմտյան մուտքի առջևի հարթակում:

Նախագծում հաշվի են առնված ՀՀՇՆ 21-01-2014 << Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն>> պահանջները:

Ապահովված է հրշեջ մեքենաների մոտեցումը դեպի կառույցի բոլոր կողմերը, ինչպես նաև դեպի հարակից տարածքում նախագծված հակահրդեհային բացօթյա ջրի տարողություն:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներ

Հողամասի մակերեսը – 96012 քմ

Կառուցապատման մակերեսը – 4123.20 քմ (4,29 %);

Կանաչ ծառատունկեր – 3131,45 քմ (3,26 %);

Տոմետ – 2198,85 քմ (2,29 %);

Սիզամարգեր – 729,83 քմ (0,76 %);

Կոշտ ծածկույթներ

Ասֆալտամետոն 8867,0 քմ (9,24%);

Տոմետ – 7104,78 քմ (7.4 %);

Մրգատու այգի – 13621,3 քմ (14.2%);

Խաղողի այգի 47135,46 (49.1 %);

Զբային մակերևույթ 7684,43 (8 %)քմ

Օժանդակ կառույցներ 1415,7(1.46 %) քմ:

Հարկայնություն – 3 հարկ

Ստորգետնյա – 1 հարկ

Վերգետնյա – 2 հարկ

Ինժեներական ենթակառուցվածք

Աշխատողների աշխատանքի և կացության հարմարավետ պայմանների, ինչպես նաև "խաղողի վերամշակման տնտեսության" տարածքում տեղակայված

տեխնոլոգիական սարքավորումների անխափան շահագործման համար նախատեսվում է իրականացնել հետևյալ ինժեներական կոմունիկացիաների տեղադրումը՝ կապի-էլեկտրական ցանցեր, գազատարներ, կոյուղու խողովակաշարեր, տեղական կեղտաջրերի մաքրման կայանների կառուցմամբ, կենցաղային ջրամատակարարման ցանցեր և կաթիլային ոռոգման համակարգի ներդրում:

2. Տնտեսության շենքերի էլեկտրաֆիկացման և էլեկտրամատակարարման համար նախատեսվում է տեղադրել 400 ԿՎԱ հզորությամբ սեփական տրանսֆորմատորային ենթակայան :

Նշված էլ. հզորությունը կապահովի խաղողի վերամշակման համար օգտագործվող սարքավորումների կարիքները, աշխատողների աշխատանքի և կեցության հարմարավետ պայմանների ստեղծումը և տնտեսության կենսագործունեության ապահովման հետ կապված հետևյալ սարքավորումների աշխատանքները՝ կաթսայատներ, պոմպային համակարգեր, մաքրման կայաններ, օդի հովացման Սպլիտ համակարգեր և այլն:

3. Տնտեսության տարածքում շենքերի ջեռուցումն ու ջերմամատակարարումն իրականացվում է կաթսայատանը տեղադրված գազի կաթսայի սարքավորումների միջոցով: Գազի ընդհանուր առավելագույն պահանջարկը կազմում է 115 խմ/ժամ:

4. Խաղողի վերամշակումից Կենցաղային կոյուղաջրերի և արտադրական կեղտաջրերի հավաքումը նախատեսվում է ներբակային ցանցի միջոցով: Դրանց մաքրումը նախատեսվում է <<Էկո լայֆ>> ԲԲԸ Դիամանտ մակնիշի 4 հատ մաքրման կայաններով: Անձրևաջրերի ջրահեռացումը նախատեսվում է ներծծող հորերում՝ տնտեսության տարածքում կանաչ տարածքների ոռոգման և ոռոգման համար դրա մասնակի կամ (ամբողջական) օգտագործման հնարավորությամբ:

5. Ջրամատակարարման համար ընկերությունը դիմել է ՇՄ նախարարություն և ստացել ջրօգտագործման թույլտվություն խորքային հորից:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս կտկվեն ծառեր և թփեր, ոռոգումը կիրականացվի կաթիլային եղանակով:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն:

Գլխավոր շենքի օդափոխության համակարգերի նկարագիր.

Խաղողի վերամշակման տնտեսության գլխավոր շենքի օդափոխության համակարգերը նախագծված են ըստ պատվիրատուի, ճարտարապետա-կոնստրուկտիվ և տեխնոլոգիական առաջադրանքի, ինչպես նաև գործող շինարարական նորմերի և կանոնների:

Շինության արտադրական նշանակության սենքերի օդափոխությունն իրականացված է մեխանիկական դրդմամբ: Հաշվարկված է ըստ նորմատիվ պահանջվող օդափոխության պատիկությունների: Սարքավորումներն ընտրված են ըստ սենքերի արտադրական և գործառնական նշանակությունների.

- Արտադրության պահպանման սենքում՝ ներածման-արտածման ռեկուպերացիոն հատակային սարք, որը նախատեսված է տեղադրել նույն սենքի առանձնացված տեխնիկական մասում,
- պատրաստի արտադրանքի պահեստի սենքում՝ ներածման-արտածման ռեկուպերացիոն հատակային սարք, որը նախատեսված է տեղադրել նույն սենքի առանձնացված տեխնիկական մասում,
- Նախասրահում և միջանցքներում՝ ներածման-արտածման ռեկուպերացիոն հատակային սարք, որը նախատեսված է տեղադրել 2-րդ հարկում սարքավորումների առանձնացված տեխնիկական սենքում,
- տեխնիկական սենքի և շշալցման սենքերում՝ ներածման-արտածման ռեկուպերացիոն առաստաղային սարք, որը նախատեսված է տեղադրել նույն սենքի առաստաղի տակ,
- Թորման արտադրամասում և արտադրական սենքում՝ ներածման հատակային սարք, որը նախատեսված է տեղադրել 2-րդ հարկում սարքավորումների առանձնացված տեխնիկական սենքում, իսկ արտածման կանալային օդամուղները՝ հորանների վրա,
- Համտեսման սրահում և արտադրական լաբորատորիայում՝ ներածման հատակային սարք, որը նախատեսված է տեղադրել 2-րդ հարկում սարքավորումների առանձնացված տեխնիկական սենքում, իսկ արտածման կանալային օդամուղները՝ հորանների վրա,
- Պարենամթերքի պահեստներում և սանհանգույցներում իրականացվում է միայն արտածում՝ սենքերի առաստաղի տակ տեղադրվող կանալային օդամուղների միջոցով:
- Յուցասրահում իրականացվում է ներածման և արտածման ընդհանուր համակարգ՝ ավելցուկային ճնշմամբ, որը կոմպենսացվում է խոհանոցներից իրականացվող արտածումների շնորհիվ:
- Ներածումը և արտածումն իրականացվում են տարբեր զոնաներից: Խոհանոցներում ևս նախատեսված է ներածման համակարգ: Ներածման և

Ներածման-արտածման ռեկուպերացիոն սարքերը հատակային են և տեղադրվում են 2-րդ հարկի տեխնիկական սենքում, իսկ արտածումներն իրականացվում են ջերմակայուն կենտրոնախույս օդամուղների միջոցով, որոնք տեղադրվում են հորանների վրա:

Սարավորումների թարմ օդառումն կատարվում է ճակատային տեղադրվող ճաղավանդակներով, իսկ արտածումն իրականացնում են հորաններով դեպի վերև:

Հիմնական շենքում ներգրավված գրասենյակների հատվածի սանհանգույցներից և սախատեսված է օդի արտածում մեխանիկական դրդմամբ՝ կանալային օդամուղների միջոցով: Օդատարներն առանձին-առանձին հորաններով բարձրանում են տանիք:

Գլխավոր շենքի կոյուղու և ջրահեռացման համակարգերի նկարագիր.

Խաղողի վերամշակման տնտեսության գլխավոր շենքի կոյուղու և ջրահեռացման համակարգերը նախագծված են ըստ պատվիրատուի, ճարտարապետա-կոնստրուկտիվ և տեխնոլոգիական առառաջադրանքի, ինչպես նաև գործող շինարարական նորմերի և կանոնների:

Շինությունում նախատեսված է իրականացնել կենցաղային կոյուղու, տեխնիկական ջրահեռացման և արտադրական ջրահեռացման համակարգեր:

Վերին հարկերի կոյուղին հորանների միջով ուղղահայաց խողովակաշարերով տեղափոխվում է կիսանկուղային հարկի առաստաղի տակով, ապա իջեցվում և հատակի միջով և, կիսանկուղային հարկի կոյուղու խողովակների հետ զուգահեռ, հեռացվում արտաքին դիտահոր:

Տեխնիկական ջրահեռացում իրականացվում է միայն կիսանկուղային հարկում: Ջրերը հեռացվում են տեղային և տեխնիկական հոսակների միջոցով: Խողովակների թեքման և հատումային հատվածներում նախատեսվում են դիտահորեր՝ խցանումների և վթարային իրավիճակներում խողովակների սպասարկման և մաքրման հասանելիության համար:

Առանձին ջրահեռացման համակարգ է նախատեսված արտադրական ջրերի (թորանքի) հեռացման համար՝ հիմնական խողովակաշարերում խցանումներից խուսափելու համար:

Կոյուղու համակարգի և տեխնիկական-արտադրական ջրահեռացման համակարգերի համար նախատեսված են առանձին մաքրման կայանքներ, որոնց մաքրման գործընթացից հետո մաքրված ջրերը Արաքսի հնահունով հեռացվում են Սևջուր գետ:

Կոյուղու և ջրահեռացման ամբողջ համակարգը ինքնահոս է, իսկ խողովակների թեքությունները նախատեսված են ըստ նորմատիվ պահանջների:

Գլխավոր շենքի կաթսայատան նկարագիր.

Խաղողի վերամշակման տնտեսության գլխավոր շենքի կաթսայատունը նախագծված է ըստ պատվիրատուի և ճարտարապետա-կոնստրուկտիվ առառաջադրանքի, ինչպես նաև գործող շինարարական նորմերի և կանոնների:

Կաթսայատանը նախատեսված է տեղադրել 4 հատակային ջրատաքացուցիչ կաթսաներ (երկու Vitoplex 200 SX2A՝ Vitotronic 300 CM1 վերահսկիչով և երկու Vitoplex 200 SX2A՝ Vitotronic 100 CC1 վերահսկիչով կոմբինացված միակոնստրուկտային կաթսաներ՝ պողպատե, փակ այրման խցիկով, էլեկտրոնային ղեկավարմամբ), գազայրիչներ (ELCO VG 2.160 DP E KL մակնիշի՝ գազի ֆիլտրով և հակաթրթիռային ներդիրով), մեխանիկական դրոմամբ (ծխաքարշ կենտրոնախույս օդամուղով) աշխատող ծխատարեր, ջերմային պահանջի սպառման համար, հիդրավլիկ սլաք, երկու ծավալային ջրատաքացուցիչներ (Vitocell-V 100 CVA 750՝ հակակորոզիոն, պողպատե, ներքին էմալապատ, մագնեզիումի անոդով, էլեկտրական տաքացուցիչի միացման հնարավորությամբ) և արագային թերթիկավոր ջերմափոխանակիչներ՝ տաք ջրամատակարարման պահանջների սպառման համար, շրջանառու պոմպեր, ջրի փափկեցման և մաքրման կայանքներ, ճնշման պահպանման կայանք, կարգավորող, կարգաբերող, սպասարկող փականային համակարգեր, բնական օդափոխության համակարգեր և այլն:

Ծխատարերը կաթսայատանից հեռացվում են չսպասարկվող կանալի միջով և բարձրանում հյուրանոցային հատվածի շինության ճակատով տանիքից վերև:

Կաթսայատան օդափոխության համար հախատեսված են ճաղաշարեր սենքի դռների և պատուհանների վերին հատվածներում՝ օդի բնական ներածման համար, և դեֆլեկտորներ՝ կաթսայատան ավելցուկ օդի բնական հեռացման համար:

Կաթսայատանը նախատեսված է նաև վթարային ջրահեռացման համակարգ՝ առվակների և դրենաժային փոսերի միջոցով:

Հակահրդեհային ավազան:

Տարածքում նախատեսվում է հակահրդեհային ավազան մինչև 15000 խմ ծավալով, որի խորությունը կլինի 2-2.2մ: Նշված ավազանում ջուրը կուտակելուց հետո կօգտագործվի ռոզման նպատակով և ընթացքում կլրասնուցվի:

Կեղտաջրերի և արտադրական հոսքաջրերի մաքրման կայան

Կեղտաջրերի խորքային մաքրման համար նախատեսվել է 4 հատ «Էկո լայֆ» ԲԲԸ Դիամանտ մակնիշի մաքրման կայաններ: Կայանները նախատեսված գինու տնտեսության յուրաքանչյուր շենքի համար առանձին-առանձին: Պահակատան համար նախատեսված է 0.7 մ³/օր արտադրողականությամբ, անձնակազմի կացարանի համար՝ 3.0 մ³/օր արտադրողականությամբ, գլխավոր մասնաշենքի կոմունալ կենցաղային հոսքաջրերի համար՝ 50 մ³/օր արտադրողականությամբ և գլխավոր մասնաշենքի արտադրական կեղտաջրերի համար՝ 15 մ³/օր արտադրողականությամբ «EcoLife»:

Կողտաջրերը շինություններից դեպի մաքրման կայանքներ տեղափոխվում են ինքնահոս ճանապարհով:

Արտադրական կարիքների համար ջուրն օգտագործվում է խաղողի լվացման, ճզմաքամման, շերտի, սարքավորումների, տարողությունների լվացման համար: Նշված նպատակներով ջրօգտագործումը կազմում է 3626,6 խմ/տարի:

Կոմունալ կենցաղային հոսքաջրերի քանակը հաշվարկված է 1565 խմ/ժամ:

Կեղտաջրերի մաքրման կայանների նստվածքները վերածվում են պարարտանյութի, որը լայնորեն օգտագործվում է գյուղատնտեսության մեջ բուսականությունը պարարտացնելու համար:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումների կազմակերպման նպատակով նախագծվող կառույցների նկուղները նախատեսված են երկակի գործառնական նշանակության խաղող պայմաններում կծառայեն, որպես նկուղային տարածքներ, իսկ վերոգրյալի դեպքում, որպես պարզագույն թաքստոց աշխատակիցների համար, որոնց դեպի թաքստոց ուղղորդումը կազմակերպվում է լույսային ցուցանակների (ՄՈՒՏՔ, ԵԼՔ) միջոցով: Նախատեսված է նաև վթարային լուսավորության համակարգ: Թաքստոցում նախատեսված է օդափոխության, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգեր, այնտեղ գտնվելու ժամանակահատվածում մարդկանց մինիմալ կենցաղային կարիքները ապահովվելու համար:

1.4.2 Գինու արտադրության տեխնոլոգիա

Համաձայն ներկայիս պատկերացումների, գինու արտադրությունը ներառում է երկու հիմնական փուլեր՝ տվյալ արտադրության պահանջներին բավարարող բարձրորակ խաղողի ստացում և տվյալ խաղողից գինու պատրաստում: Խաղողի գինին ստացվում է խաղողի քաղցուի մեջ պարունակվող շաքարի լրիվ կամ մասնակի սպիրտային խմորման արդյունքում և պարունակում է 9 – 20 ծավալային % սպիրտ: Սեղանի բնական գինիներն ունեն 9 – 14 ծավալային % թնդություն և պարունակում են միայն բնական ծագման էթիլ սպիրտ: Սեղանի սպիտակ անապակ գինիները ստացվում են խաղողի սպիտակապտուղ սորտերից, քաղցուի մեջ պարունակվող շաքարի լիովին խմորման արդյունքում:

Խաղողի բերքահավաքը կատարվում է սեպտեմբերին՝ խաղողի տեխնիկական հասունացման շրջանում՝ 19.0 գ/100սմ³-ից բարձր շաքարի պարունակության դեպքում:

Խաղողի վերամշակումն իրականացնում են ավելի նուրբ մեխանիկական ռեժիմով, ինչը բացառում է խաղողի քաղցուի հարստացումը չանչի մեջ պարունակվող դաբաղային նյութերով՝ օգտագործելով գրտնակային և թիակավոր ջարդիչ-չանչանջատիչներ: Չանչերի անջատումից հետո փուլը տեղափոխվում է մամլիչ: Բարձր որակի քաղցու ստանալու համար փուլի մամլումն իրականացվում է զամբյուղային մամլիչով: Գինու ստացման համար օգտագործվում է ինքնահոս և 1-ին մամլման քաղցու: Խմորումից առաջ քաղցուն պարզեցվում է:

Պարզեցումը տևում է 12-18 ժամ՝ 8 – 12°C ջերմաստիճանի պայմաններում, որից հետո քաղցուն առանձնացվում է նստվածքից:

Քաղցուի խմորման համար օգտագործվում են ակտիվ չոր խմորիչներ, որոնք նախատեսված են բարձրորակ սեղանի սպիտակ գինիների արտադրության համար: Խմորասնկային մերանն ավելացվում է քաղցուի ծավալի 3%-ի չափով:

Խմորման ընթացքը տևում է 7 – 12 օր՝ 17 – 21°C ջերմաստիճանի պայմաններում:

Բուռն խմորման ավարտից 2 օր հետո կատարվում է առաջին փոխլցումը, և երիտասարդ գինենյութը սուլֆիտացվում է 60 մգ/դմ³ SO₂-ի հաշվով: Երեսուն օր հետո կատարվում է 2-րդ փոխլցումը, որից հետո գինենյութը սուլֆիտացվում է 100-200 մգ/դմ³ SO₂-ի հաշվով: Սուլֆիտացիայի համար օգտագործվում է կալիումի մետաբիսուլֆիտ: Պահպանման ընթացքում տեղի է ունենում գինենյութի ինքնապարզեցում, որի արդյունքում ցրտասնկայուն կոլոիդները և գինեքարն անցնում են նստվածք: Կոլոիդներն աղստրբում են գինենյութի կախությանին մասնիկները և միասին նստում տարայի հատակին՝ պարզեցնելով գինին և բարենպաստ պայմաններ ստեղծելով ֆիլտրման և մշակման համար: Պահպանման տևողությունը՝ 6 ամիս է:

1.4.3 Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը

Համաձայն պատվիրատուի հետ կնքված պայմանագրի պահանջների, «Նորգեո» ՍՊԸ կողմից 2022թ. Սեպտեմբեր ամսին կատարվել է ՀՀ Արմավիրի մարզ, Նոր Արմավիր համայնքում, գինետան տեղամասի ինժեներաերկրաբանական հետազոտություններ:

Նախագծվող կառույցը հատակագծում հիմնականում ուղղանկյան տեսքի է, տեղ-տեղ դուրս եկած հատվածներով: Շինությունը երկհարկանի է, նախատեսված մանսարդով և նկուղային հարկով: Նախագծվող շինությանը հիմնատակը նախատեսվում է տեղադրել 5-ից 8 մետր խորության վրա: Նշված տարածքի 1:500 մասշտաբի հանույթը, գոյություն ունեցող շենքի ուրվագծերով, տրված է պատվիրատուի կողմից: Տարածքում նախատեսվում է նաև կառուցել հակահրդեհային ավազան:

Ուսումնասիրվող տեղամասի ինժեներաերկրաբանական պայմանների պարզաբանման համար կատարվել են հետևյալ աշխատանքները.

> Նախկինում, տվյալ տեղամասին հարակից տարածքներում կատարված ինժեներաերկրաբանական և նախագծային աշխատանքների հաշվետու նյութերի հավաքում, ամփոփում և ընդհանրացում:

> Պատվիրատուի պահանջով տեղամասում հորատվել է 3 հորատանցքեր, մինչև 15,0 մ խորությամբ, որոնցից 2-ը նախագծվող շինության տեղամասում, իսկ 1-ը՝ հակահրդեհային ավազանի հատվածում 45,0 զմ ընդհանուր ծավալով:

> Հորատման աշխատանքները կատարվել են Atlas Copco CS14 Christensen հորատող հաստոցով, սյունակային եղանակով, հանուկի ընտրմամբ:

> Լաբորատոր հետազոտությունների համար ընտրվել է փորձանմուշ:

> Կամերալ աշխատանքներ, որի ընթացքում կատարվել է դաշտային աշխատանքների և ֆոնդային նյութերի ամփոփում, ընդհանրացում և սույն եզրակացության կազմում:

Կատարված աշխատանքների հիման վրա տեղամասի ինժեներա-երկրաբանական կառուցվածքում առանձնացվել են գրունտների հետևյալ տարատեսակերը՝

Շերտ թիվ 1 Հողաբուսական շերտ կավավազա-խճային կազմի: Շերտն համատարած է և ունի 0,2-0,7 մետր հզորություն:

Տեխնոգեն առաջացումներ

Շերտ թիվ 2 Կավավազ, բաց դարչնագույն միջինից-պինդ թանձրության

տուֆի մինչև 3սմ բեկորների առկայությամբ, մանրախճային լցանյութով մինչև 10-30%: Գրունտը միջին խտության է, լցանյութը՝ սակավախոնավ: Շերտը ունի 4,3 մետր

հզորություն:

Վերին-ստորին չորորդականի առաջացումներ

Շերտ թիվ 3 Հրաբխային խարամ, մոխրագույն և վարդագույն մանր և խոշոր բեկորների առկայությամբ մանրախճերի և ավազի, լցանյութով մինչև 5-40%, տեղ-տեղ առկա են բաց վարդագույն տուֆի մեծաբեկորներ: Գրունտը միջին խտության է, լցանյութը՝ սակավախոնավ: Շերտը համատարած է և ունի 8,7-14,8 մետր հզորություն:

Շերտ թիվ 4 Տուֆ, վարդագույն, ամուր, մասնատված, սկզբնամասում հողմնահարված թույլ կարծրության: Շերտը ունի 6,1 մետր հզորություն: Ստորգետնյա ջրերը տեղամասում, մինչև 15,0մ խորության հորատանցքերով չեն բացահայտվել :

Եզրակացություն

Կատարված ինժեներաերկրաբանական աշխատանքների հիման վրա կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները.

1. Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տեղամասը տեղադրված է Արարատյան միջլեռնային ակունուլյատիվ գոգահովիտի սահմաններում՝ բլրակի վրա:
2. Շրջանը և ուսումնասիրվող տեղամասը մտնում են տաք կլիմայական գոտու մեջ բնութագրվում է շոգ ամառով և ցուրտ ձմեռով խիստ մայրցամաքային կլիմայով:
3. Ուսումնասիրվող տեղամասը ինժեներաերկրաբանական պայմանների բարդության աստիճանով (կարգը), ըստ գեոմորֆոլոգիական, հիդրոերկրաբանական և վտանգավոր երևույթների ու պրոցեսների առումով, ըստ ՀՀ Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմերի (ՀՀՇՆ II – 6.02 – 2006) համապատասխանում են սեյսմիկ երկրորդ կարգին (սպեցիֆիկ վտանգավոր գրունտներ, ստորգետնյա ջրեր, գեոմորֆոլոգիական բացասական էլեմենտներ և այլն):
4. Տեղամասերի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքին մասնակցում են գրունտների հետևյալ 2 ինժեներաերկրաբանական տիպերը.
 - ❖ Հողաբուսական -----շերտ թիվ 1
 - ❖ Կավային----- շերտ թիվ 2
 - ❖ Խճաքարային-----շերտ թիվ 3
 - ❖ Ժայռային-----շերտ թիվ 4
5. Գոյություն ունեցող շինության համար, որպես հիմնատակի գրունտներ ծառայում են շերտ թիվ 3 և 4 խոշորաբեկորային գրունտները, նույնը պետք է ծառայեն նաև նախագծվող մասնաշենքի համար, որոնք ունեն բավարար ինժեներաերկրաբանական պայմաններ:
6. Ստորգետնյա ջրերը տեղամասում, մինչև 15մ խորության հորատանցքերով չեն բացահայտվել:
7. Վտանգավոր ֆիզիկա-երկրաբանական երևույթները և պրոցեսները (սողանք, սուֆոզիոն ձագարափոսեր և այլն) տարածքում բացակայում են:

8. Համաձայն ՀՀՇՆ II-6.02-2006 ուսումնասիրվող տեղամասը մտնում է III (երրորդ) սեյսմիկ գոտու մեջ: Տեղամասի գրունտային պայմանների գործակիցը (Ko) ըստ թիվ 4 աղյուսակի կազմում է 1,0: Տեղամասերի հաշվարկային սեյսմիկությունը սպասվող առավելագույն արագացման գործակցի (g) արտահայտմամբ կկազմի.


$$A_{max} = 0.4g \times 1.0 = 0.4g$$

9. Գրունտների սառչելու առավելագույն խորությունը կազմում է 70սմ:

10. Կառույցների շինարարական փոսորակները բացելուց հետո և հիմքերը լցնելուց առաջ անհրաժեշտ է ունենալ ինժեներերկրաբանի կողմից դրանց զննման համապատասխան եզրակացությունը:



ՀԱՏԱԿԱԳԻԾ ± 0.000 ՆԻՇՈՒՄ Մ 1:300



ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ

Արմավիրի մարզ
 Նոր Արմավիր համայնք
 Հատված կադաստրային քարտեզից
 Կադաստրային ծածկագիր՝ 04-071-0101-0002
 Մասշտաբ 1: 2000

Կադաստրի
 կոմիտե




	Կոորդինատներ	
	X	Y
1	8413542.6380	4441533.0280
2	8413534.1970	4441517.9740
3	8413517.6360	4441502.6780
4	8413509.7630	4441489.3110
5	8413509.0830	4441478.8650
6	8413497.8020	4441472.0990
7	8413487.5690	4441466.9290
8	8413501.4170	4441455.5120
9	8413510.1720	4441436.9800
10	8413515.9550	4441416.0310
11	8413534.6370	4441373.3610
12	8413548.9470	4441354.0840
13	8413665.1780	4441337.5080
14	8413584.3030	4441320.0920
15	8413600.5260	4441306.9160
16	8413622.7410	4441292.0090
17	8413645.1198	4441285.5990
18	8413671.9942	4441281.6778
19	8413697.0690	4441282.8620
20	8413724.2490	4441283.6840
21	8413736.0060	4441290.8930
22	8413754.1640	4441317.1050
23	8413788.0790	4441341.6720
24	8413782.1700	4441395.4430
25	8413798.1840	4441430.1240

Կադաստրային ծածկագիր՝ 04-071-0101-0002




Արձափրի մարզ
 Նոր Արձափրի համայնք
 Հատված կադաստրային բարտեզից
 կադաստրային ծածկագիր՝ 04-0710101-0011
 Մասշտաբ 1:2000

Կոորդատի
 կոմբին



Նստեղանակ		
	X	Y
1	0413073.3250	4441613.0058
2	0413060.3168	4441642.7885
3	0413061.3137	4441626.6385
4	0413044.3016	4441642.3593
5	0413010.3100	4441657.6112
6	0413225.3238	4441662.3752
7	0413028.3031	4441653.6417
8	0413044.3037	4441642.3389
9	0413021.2954	4441629.1487
10	0413003.3100	4441612.4285
11	0413076.3489	4441593.4139
12	0413042.3369	4441583.0029
13	0413088.3200	4441486.7291
14	0413070.3202	4441496.9294



Կոորդատի կոմբին

4.S

Շինարարական մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՍՆԻՊ 1.04.03-85* մաս II, հետևից հիման վրա հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը: Օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 72,0 ամիս շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից:

1.4.4 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շինմոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Բոլոր տիպի շինմոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Ծինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից:

Ծինհրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգներով:

Ծինհրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Ծինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ գերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

Հետիոտների անվտանգությունը ապահովելու նպատակով շինհրապարակը անհրաժեշտ է ցանկապատել թիթեղով:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

1.4.5 Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ

Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով: Գլխավոր կապալառու կազմակերպությունը որոշվելու է մրցույթով:

Մասնաշենքերի միացումը արտաքին ինժեներական ցանցերին կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շենքերի, ավտոճանապարհների, հրապարակների և մայթերի կառուցումը կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կարելի է իրականացնել ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վարձակալել դրանք այլ կազմակերպություններից:

Ժամանակավոր շինությունների, վերամբարձ կռունկի, պահեստավորման մակերեսների տեղակայումը պատկերված է շինարարական գլխավոր հատակագծի վրա:

Առաջարկվում է հնարավորինս օգտագործել գույքային շարժական շինություններ:

Ժամանակավոր շինությունների ցանկը և դրանց տեղակայումը ցանկալի է լրացուցիչ ճշտվեն տեղում և համաձայնեցվեն պատվիրատուի հետ:

1.4.5 Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Առաջարկվում է շինարարության նյութատեխնիկական մատակարարման հետևյալ սխեման.

- Առանձին ամրանային ձողերը և հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվում են

անմիջականորեն շինարարական հրապարակ, որտեղ կատարվում է դրանց պահեստավորում և տեղադրում,

- Բետոնային խառնուրդը միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվում են անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով,
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը իրականացվելու է շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում: Տարածքում քսայուղեր և վառելիքային չի պահեստավորվելու :

Շինարարությունը կիրականացվի մասնագիտացված կազմակերպության կողմից :

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Աշխատանքների բնույթից ելնելով^ա բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:
2. Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի՝ կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:
3. Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների՝ աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:


ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ՝ կոշիկ)՝ համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում՝ լուսավորում՝ օդափոխում՝ պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն)՝ սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան
2. Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:
3. Աշխատանքի պաշտպանության^ա անվտանգության տեխնիկայի՝ արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության

վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4. Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման «հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

Նախատեսվող գործունեության տարածք շինհրապարակի կազմակերպման հատակագիծ



1.4.6 Կադրային ապահովում և շինտեխնիկա

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 80 մարդ, որից

Ինժիներատեխնիկական անձնակազմ - 5 մարդ

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է ստորև:

Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ

NN	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Ավտոմոբիլային կրունկ	XCMG	2
2	Էքսկավատոր	CAT 320	1
3	Էքսկավատոր`	CAT 318	1
4	Էքսկավատոր-բեռնիչ	Bobcat S530	2
5	Գլղոն	CAT CS 563	1
6	Բուլլոզեր	CAT D6R	1
7	Շարժական կոմպրեսոր	Comp air C 76	1
8	Ավտոբեռնապոմպ	Merc B. Acrtos 4144 D	1
9	Թրթռիչ մակերեսային էլեկտրական	ИБ-91А	2
10	Թրթռիչ խորքային էլեկտրական	ИБ-102А	4
11	Փոխարկիչ թրթռիչների համար	ИБ-4	4
12	Դակիչ ձեռքի էլեկտրական	ИЭ-4709А	2
13	Շռակցման տրանսֆորմատոր	ТД-500	8
14	Տոփանիչներ պնևմոն և ձեռքի		4
15	Փոքր մեքենայացման միջոցներ	կոմպլեկտ	3
16	Ավտոինքնաթափ		ըստ հաշվարկի
17	Ավտոբեռնախասնիչ	Kamaz 58149 z	ըստ հաշվարկի

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ մասնագիտացված սպասարկման կետերում:

1.4.7 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ եւ այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ եւ կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր եւ այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի եւ ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաեւ շինարարական անձնակազմի խմելու եւ կենցաղային նպատակների համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, կենցաղային աղբն է տարեկան մեկ մարդու հաշվարկով 70 կգ $80 \times 70 \times 6 / 1000 = 33.6$ տ եւ շինարարական աղբն է 120 խմ ծավալով: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

- a) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{խ.տ.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 5 մարդ

N – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n_1 – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 75 մարդ

N_1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 խմ.օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 2160 օր

$$W_{\text{խ.տ.}} = (5 \times 0.016 + 75 \times 0.025) \times 2160 = 4223 \text{ խմ/շին. ժամ.}:$$

բ) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 1000 քմ,

K_1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 խմ,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 2160

$$U_1 = 1000 \times 0.0015 \times 2160 = 3240 \text{ խմ/շին. ժամ.}$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 7463 խմ/շին. ժամ:

Շինարարության փուլում անհրաժեշտ ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոդիստեններով, ոռոգման ջրի ցանցից: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոգուգարաններ, իսկելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Շահագործման փուլում նախատեսվող գործարանի կոմունալ-տնտեսական ջրով անխափան մատակարարումը ապահովելու համար նախատեսվում է տարածքում հորատել հորատանց: Խմելու ջուրը կբերվի տարաներով և կպահեստավորվի գործարանի տարածքում:

Շահագործման փուլ:

Արտադրական ջրերի և տնտեսա-կենցաղային կեղտաջրերի մաքրման համար նախատեսվում է տեղադրել ինքնավար մաքրման կայան:

Մթնոլորտային օդ: Հիմնական արտանետումները պայմանավորված են լինելու կաթսայատան աշխատանքով: Մթնոլորտ կարտանետվի ազոտի և աշխաձնի օքսիդներ, որի համար կմշակվի և ՇՄ նախարարության համաձայնեցմանը կներկայացվի ՍԹԱ նախագիծը:

Գազամատակարարումը 154խմ ժամ ծախսով կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի կցվում է:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը 400 կՎա հզորությամբ կիրականացվի համաձայն պայմանագրի՝ (կցվում է):

1.4.8 Սանիտարապաշտպան գոտի

Համաձայն CH-245-71 նորմի գինու թորման առաջնային արտադրամասերի համար, որին դասվում է նախատեսվող գործունեությունը ՍՊԳ պետք է լինի նվազագույնը 100 մ: Այս հեռավորությունը ապահովված է:

2. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ

2.1 ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Խաղողի վերամշակման տնտեսության կառուցման համար նախատեսված տարածքը գտնվում է Արմավիրի մարզի, Մեծամոր համայնքի Նոր Արմավիր վարչական շրջանում: Նախատեսվող գործունեության տարածքը դուրս է բնակավայրերի հողերի սահմաններից և գտնվում է ավելի քան 500մ հեռավորության վրա :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեծամոր, քաղաք Հայաստանի Արմավիրի մարզում, Վաղարշապատ քաղաքից 8 կմ հյուսիս-արևելք: Ունի շուրջ 9 հզ. բնակիչ: Գտնվում է Արմավիր քաղաքից 8 կմ հս-արլ, ծովի մակարդակից 800-900 մ բարձրության վրա:

Մեծամորի շրջակայքում է գտնվում ատոմային էլեկտրակայանը:

Մեծամորը հիմնադրվել է 1969թ.՝ որպես ԱԷԿ-ը կառուցողների բանվորական ավան: 1972-ին ստացել է քաղաքատիպ ավանի, 1992-ին՝ քաղաքի կարգավիճակ: Գլխավոր հատակագիծը և հասարակական շենքերը նախագծվել են 1967-86-ին՝ «Հայպետնախագիծ» ինստիտուտում: Քաղաքն ունի բնակելի երեք միկրոշրջան, համաքաղաքային նշանակություն ունեցող շենքերով հյուսված կենտրոն, հիվանդանոցային համալիր և կոմունալ-կենցաղային շինությունների գոտի:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տեղամասը տեղադրված է Արարատյան միջլեռնային ակունուլյատիվ գոգահովիտի սահմաններում: Այն ունի բլրակի տեսք (400 x 250 մ), որտեղ բացարձակ նիշերը տատանվում են բլրակի ստորին հատվածում 885մ-ի սահմաններում, որից աստիճանաբար բարձրանում է բլրակի գագաթը մինչև 900մ-ը: Տարածքը 4 կողմից շրջապատված է գյուղատնտեսական մշակովի հողերով:

Երկրաբանական կառուցվածք Շրջանի և տեղամասի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են, ստորին – վերին Չորրորդականի հրաբխային ապարներ, որոնք հիմնականում ծածկված են ժամանակակից նստվածքներով այլուվիալ, խոշորաբեկորային, կավային, ավազային և տեխնածին գրունտներով:

Ուսումնասիրվող տեղամասը գտնվում է Մարդարապատ-Նախիջևան ակտիվ խզվածքի սարդարապատ սեզմենտի տարծքում: Սեզմենտը ունի 70-75կմ երկարություն և վերնետային կլինեմատիկա:

Հիդրոերկրաբանական տեսակետից Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքում տարածված են շերտային ջրերը, որոնք կապված են նստվածքային շերտախմբերի հետ և ունեն համեմատաբար խորը տեղադրում:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն՝ մեր ուսումնասիրվող տարածքում բացակայում են:

Համաձայն ինժեներա-երկրաբանական եզրակացության **Շերտ թիվ 1** Հողաբուսական շերտ կավավազա-խճային կազմի: Շերտն համատարած է և ունի 0,2-0,7 մետր հզորություն:

Տարածքում բնության և պատմամշակույթային հուշարձաններ չկան: Ծառաթուփային բուսականությունը բացակայում է:

ՀՀ կառավարության 2008թ. օգոստոսի 14 N967-ն որոշմամբ Արմավիրի մարզի տարածքում հաստատվել են բնության հետևյալ հուշարձաններ.

Ջրագրական հուշարձաններ

«Մեծամոր» լիճ	Արմավիրի մարզ, Տարոնիկ գյուղից մոտ 3 կմ հս-արմ
---------------	--

Կենսաբանական հուշարձաններ

2. «Ավազասեր (պսամոֆիլ) բուսականություն»	Արմավիրի մարզ, քաղ. Վաղարշապատ, Ջվարթնոց տաճարի մոտ
3. «Ջրաձահճային բուսականություն»	Արմավիրի մարզ, Մեծամոր լիճ

Պատմության և մշակույթի հուշարձանների ցանկ

հուշարձան	կառուցված	համարակից
Քաղաքատեղի Արգիշտիիսիսիլի	մ.թ.ա. 8-6 դդ., 10-13 դդ., 19 դ.	4.71/1
Միջնաբերդ՝ արևմտյան	մ.թ.ա. 8 դ.	4.71/1.1
Պալատական համալիր	մ.թ.ա. 776-763 թթ.	4.71/1.1.1
Ջրամբար	մ.թ.ա. 760-730 թթ.	4.71/1.1.2
Մատուռ Սբ. Դավիթ	19 դ.	4.71/1.1.3
Թաղամաս՝ քաղաքային	մ.թ.ա. 8-6 դդ.	4.71/1.2

2.2 ԿԼԻՄԱՆ

Շրջանը և տեղամասը գտնվում են տաք կլիմայական գոտու մեջ, ունի շոգ ամառով և ցուրտ ձմեռով խիստ մայրցամաքային կլիմա: Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է $+41^{\circ}\text{C}$, նվազագույնը՝ -31°C : Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը կազմում է 62 %: Տարվա ցուրտ եղանակներին գերակշռում են հյուսիս-արևելյան ուղղության քամիները միջին արագություններից առավելագույնով 2,8 մ/վ և տաք եղանակներին համապատասխանաբար արևելյան 1,9 մ/վ արգության քամիները: Հնարավոր են 20 տարվա ընթացքում, մեկ անգամ, մինչև 20 մ/վրկ արագության քամիներ: Չյան ծածկոցի հաստությունը, տասնօրյա առավելագույնում, կազմում է 40 սմ: Հողի սառչելու առավելագույն խորությունը կազմում է 70 սմ (ՀՀՇՆ II-7.01-2011):

Օդի ջերմաստիճան

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձ- րություն ձովի մակար դակից. մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների. °C												Միջին տարե կան. °C	Բացարձակ նվազագույն. °C	Բացարձակ առավել լագույն. °C
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Արմավիր	870	-4.2	-1.6	4.9	12.4	17.4	21.6	25.7	25.1	20,0	12.9	5.7	-0.9	11.6	-31	41

Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %															
	ըստ ամիսների													Մի ջին տա րե կան, %	Միջին ամսական ժամը 15-ին	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	ամենա ցուրտ ամսվա %		ամենա շոգ ամսվա, %	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	
Արմավիր	76	72	62	56	57	51	48	49	53	65	74	78	62	62	29	

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական, մմ												Ձնածածկույթ			
	օրական առավելագույն												Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Չյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	
	ըստ ամիսների															
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր				Տարեկան
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Արմավիր	18	19	25	32	44	26	12	9	11	25	23	16	260	42	38	92
	19	21	26	37	42	21	38	31	35	30	30	20	42			

Քամի

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Սահմաններ	Կրկնելիությունը, % ըստ ուղղությունների							Սահմանողությունների	Խոնե-հոտառում % Միջին ամսական	Միջին տարեկան ՌՄԵԼ քամիներով	Հաշվարկային արագությունը				
			Միջին արագությունը, մ/վ										, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "n" տարիների ընթացքում				
			Հյուսիսային (Հս)	Հյուսիս - Արևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավ - Արևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավ - Արևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)				Հյուսիս - Արևմտյան (ՀսԱրմ)	20	50	100	
Արմավիր	917,0	հունվար	7	5	17	8	9	8	28	18	77	0,5	0,9	12	20	23	24
			2,2	2,2	1,9	1,9	1,8	2,3	2,5	2,8							
		ապրիլ	5	7	28	11	9	9	20	11	52	1,3					
			2,8	3,4	2,5	2,7	2,7	3,7	3,0	3,7							
		հուլիս	3	8	31	16	11	7	16	8	55	1,1					
			2,1	2,5	1,9	2,2	1,1	2,6	2,7	2,6							

2.3 Օդային ավազան

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի («Հայէկոմոնիտորինգ») կողմից:

Սակայն Մեծամոր համայնքում և շրջակայքի գյուղերում մշտական (ստասցիոնար) դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչներ չեն տեղադրված և օդային ավազանի աղտոտվածության վերաբերյալ տվյալներ չկան:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Դրա համար «Էկոմոնիթորինգ»-ը առաջարկում է համապատասխան ձեռնարկ-նուղեցույց¹: Ըստ այդ նուղեցույցի մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար, որոնց թվին է դասվում Մեծամոր բնակավայրը, օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են՝

- Փոշի՝ 0.2 մգ/մ³;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ³;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ³;
- Ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ³:

¹ ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ. «ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները» նուղեցույց-ձեռնարկ: Երևան-2011

2.4 Ջրային ռեսուրսներ

ՀՀ Արմավիրի մարզն առանձնապես հարուստ չէ ջրային ռեսուրսներով: Արմավիր քաղաքը գտնվում է Ախուրյան ջրավազանային կառավարման տարածքում:

Մարզում է գտնվում հանրապետության ամենացածրադիր լիճը՝ Այդր (Ակնա) լիճը, ստորերկրյա ջրերի ամենամեծ ելքը՝ պատմական Մեծամորը: Դարեր շարունակ օգտագործվել է որպես Արարատյան դաշտերի հողերի ոռոգման աղբյուր: Գտնվում է ծովի մակարդակից 853մ բարձրության վրա: Ջրադեցնում է 50 հեկտար մակերես, ունի 2 մետր խորություն, ձագարաձև ուրվագիծ և ստորերկրյա սնում: Միակ գետը, որ սկսվում է մարզի սահմաններում և սկսվում է Ակնա լճից Մեծամորն է (Սևջուրը) , սնվում է Այդր լճից ու նրա մերձակա աղբյուրներից: Մեծամորի միակ խոշոր վտակը Քասախն է:

Գարնանը սահմանային Արաքսի, ինչպես նաև Քասախի հորդացած ջրերը դուրս են գալիս ավերից ու ավերածությունների պատճառ դառնում: Թուրքիայի հետ սահմանն անցնում է Արաքս գետով: Ռեսուրսների պակասը հիմնականում լրացվում է ստորգետնյա ջրային ռեսուրսներով:

Մեծամոր և Արաքս գետերի ջրերի որակն ըստ 2022թ. տեղեկագրի

Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք

Ախուրյանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 16 դիտակետում. այդ թվում՝ 14 գետային և 2 ջրամբարային:

Մակերևութային ջրերի որակ Ախուրյանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 11 դիտակետում: Ախուրյան գետի ջրի որակը Ամասիա գյուղից ներքև, Գյումրի քաղաքից ներքև և Բագարան գյուղից ներքև հատվածներում նոյեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), Գյումրի քաղաքից վերև ջրի որակը նոյեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Աշոցք գետի ջրի որակը Մուսայեյյան գյուղից վերև նոյեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանում՝ «անբավարար» (4-րդ դաս): Կարկաչուն գետի ջրի որակը գետաբերանում նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Մեծամոր գետի ջրի որակը Վաղարշապատ քաղաքից հարավ հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), Վաղարշապատ քաղաքից հարավարևելք հատվածում հոկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), Ռանչպար գյուղից ներքև հատվածում ջրի որակը հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

2.5 Հողերի նկարագիրը

Հողերը

Շրջանի տարածքն անտառազուրկ է: Տարածված են շագանակագույն, բարձրադիր գոտում նաև՝ քարքարոտ սակավագոր սևահողերը, ծածկված հացազգի, տարախոտահացազգի, երբեմն մարգագետնատափաստանային բուսականությամբ:

Համայնքի հողային հաշվեկշիռը կազմում է 647.95 հա, որից արդյունաբերության, գյուղատնտեսության – 6.84հա, բազմամյա տնկարկներ-84.66հա:

2.6 Հիմնային աշխատանքներ

Նախատեսվող գործունեության նախագիծը ենթադրում է նաև հիմքերի փորման աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքիերի տեղադրման համար կատարվելու է մոտ 64913 խմ ընդհանուր ծավալով փորման աշխատանքեր հանվող 17940 խմ ծավալով բուսահողը կպահվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան, 17650 խմ ծավալը կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք, իսկ մնացած մասը՝ 29323 խմ կտեղափոխվի համայնքի կողմից օրենքով սահմանված վայր:

2.7 Կենսաբազմազանություն

Տարածաշրջանի բնական լանդշաֆտը կիսաանապատային և լեռնատափաստանային է: Մարզում անտառածածկ տարածքներ չկան: Տարածքին բնորոշ են չորասեր ու աղասեր բույսերը: Համաձայն «Հայաստանի Հանրապետության Կենսաբազմազանության պահպանության, օգտագործման և վերարտադրության ռազմավարության և գործողությունների պետական ծրագրի» Արմավիրի մարզի տարածքում ՀՀ Կարմիր գրքում ներառված 24 բուսատեսակ և 86 կենդանատեսակ գտնվում են անհետացման եզրին:

Բուսական աշխարհ. մարզի տարածքը գտնվում է Արմավիրի ֆլորիստիկ շրջաններում, որոնց համար տիպիկ են Հայաստանի ֆլորայի 170-ից ավելի հազվագյուտ և անհետացող և 50-ից ավելի էնդիմիկ տեսակներ: Գերակշռում են կիսաանապատային չորասեր բուսատեսակները, իսկ ցածրադիր, ճահճապատ տարածություններում՝ եղեգնի մացառուտները: Տարածաշրջանում գրանցված են մոտ 130 բուսատեսակ, որոնցից որպես դոմինանտ կարելի է նշել հովվափողազգիներից (*Alismataceae*)՝ հովվափող լանցետային (*Alisma lanceolatum*), սովորական նետախոտը (*Sagittaria sagittifolia* L.), եռատերև նետախոտը (*Sagittaria trifolia* L.), հովանոցազգիներից՝ ակտոնոլեմ խոշորաբաժակը (*Actinolema macrolema*), աննշմարակող անհարթապտուղը (*Aphanopleura trachisperma*), երնջակ Վանատուրի (*Eringium vanaturii*), աստղածաղիկազգիներից՝ վարդատերեփուկ մուշկայինը (*Amberboa moschata*), խոզանափուշ բարակը (*Caucinia tenella*), կանգար տուրնեֆորի (*Gundelia tournefortii*), կաթնուկ Թախտաջյանի (*Lactuca takhtadzhianii*), խաչածաղկավորներից՝ լրջուն թռչնակտուց (*Isatis ornitorhynchus*), ցախակեռասազգիներից՝ կտտենի, թանթրվենի Տիգրանի (*Sambucus tigranii*), մեխակազգիներից՝ փշատերևուկ ծակող (*Acanthophyllum pungens*), ալոխրուլա բունգեի (*Allochrysa bungei*), մեխակ Լիբանանի (*Dianthus libanotis*), թելուկազգիներից՝ բիեներցիա շուրջաթև (*Bienertia cycloptera*), օջան Թամամջյանի (*Salsola tamamschjanae*), սպանախ քառաեզ (*Spinacia tetrandra*), լրբազգիներից՝ գազ տարօրինակ (*Astragalus paradoxus*), հացհամեմ գլխիկավոր (*Trigonella capitata*), ֆրանկենազգիներից՝ ֆրանկենիա փոշապատ (*Frankenia pulverulenta*), բորակաթուփազգիներից՝ բորակաթուփ շոբերի (*Nitraria schoberi*), հացազգիներից՝ այծակն հաստ (*Aegilops crassa*), ցորեն արարատյան (*Tritium araricum*), կարմրանազգիներից՝ կարմրան (*Tamarix*), կարմրան ութառեզանի (*Tamarix octandra*), զուգատերևազգիներից՝ տետրադիկլիս բարալիկ (*Tetradiclis tanella*) և այլն:

Արմավիրի մարզում ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված է 26 տեսակներ: Հայաստանի բույսերի կարմիր գրքում գրանցված հազվագյուտ և անհետացող տեսակներից մարզի տարածաշրջանում հանդիպում են աղուտների և կիսաանապատային բուսականության հետևյալ ներկայացուցիչները, մասնակիորեն՝

խնկեղեգ ճահճային(*Acorus calamus* L.), Շտերնբերգիա շնդեղածաղկային(*Sternbergia colchiciflora* Waldst. et Kit), Ակտինոլեմ խոշարածակ (*Actinolema macrolema* Boiss), Երնջակ Վանատուրի (*Eryngium wanaturii* Woronow), Վարդատերեփուկ Իլլինի (*Amberboa iljiniana* Grossh), **Կալախոտ կասպիական** «*Kalidium caspicum*» և այլն: Կալախոտ կասպիականը 15-17 սմ բարձրությամբ մոխրականաչ, սուր տերևներով բույս է վտանգված տեսակ է:

Կենդանական աշխարհ. կենդանական աշխարհը հարուստ է կաթնասուններով, թռչուններով, կրծողներով, սողուններով, խիտունջներով և այլն: Հանդիպում են հարթավայրերին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ: Տարածաշրջանում տարածված են 113 տեսակ ողնաշարավոր կենդանիներ, որոնցից 28 տեսակը կաթնասուն է, 67-ը՝ թռչուն, 15-ը՝ սողուն և 3-ը՝ երկկենցաղ: Տարածաշրջանում դոմինանտ և բնորոշ տեսակներից են Հայաստանում ամենուրեք տարածված *Crocidura* (սպիտակատամիկ), *Vulpes vulpes* L. (աղվես ս), *Cricetus auratus* Nat. (գերմանամուկ), *Microtus arvalis* Pall. (դաշտամուկ), *Perdix perdix* L.(կաքավ), *Grus grus* L. (կռունկ) և այլն: Տարածաշրջանին բնորոշ ողնաշարավոր տարածքված կենդանիներից են՝ գայլը, աքիսը, եղեգնակատուն, ջրասամույրը, աղվեսը, կոնչան՝ բադը, ճահճակուղբը, լճագորտը, մոխրագույն առնետը ժայռային մողեսը, սողուններից՝ սովորական լորտուն և միջատները: Անողնաշարավոր կենդանիներից հանդիպում են ծովախեցգետինը, մրջյունը, մեղուն, ճռիկը, մորեխը, կաղամբաթիթեռը և այլն: Թռչունները ներկայացված են բաց տարածքներին բնորոշ տեսակներով՝ տնային ճնճղուկը, մոխրագույն ագռավը, կաչաղակը և այլն: Գարնան և աշնան սեզոններին այստեղ հանդիպում են բազմաթիվ չվանցող տեսակներ:

Տարածաշրջանի կիսաանապատներում հանդիպում են բազմաթիվ էնդեմիկ անողնաշար տեսակներ, ներառյալ միջերկրածովային, իրանական, կովկասյան և դրիմյան ծագում ունեցողները: Ադուտային հալոֆիլ համակեցությունների հետ է կապված էնդեմիկ տեսակի՝ Արարատյան որդանի (*Porphirophora hamelii*) գոյությունը:

Տարածաշրջանին բնորոշ էնդեմիկ կենդանիներից է՝ հայկական որորը (*Larus armeniacus* But.), Մեղու Դեսպտորիա (*Megachile deseporia* Peres): Տարածաշրջանում հանդիպող ՀՀ Կարմիր Գրքում գրանցված կենդանիների տեսակներից հանդիպում են, մասնակիորեն՝ հարավային պայտաքիթը 30 (*Rhinolophuseuryales*), վարդագույն հավալուսն(*Pelecanus onocrotalus*), քաջահավ (*Plagadis falcinellus* Linneaus), փոքր ձկնկուլ(*Phalacrocorax pygmaeus* Linneaus), Ուբադչի ճպուռ (*Gomphus ubadschii* Schmidt), Սատունինի սկոտոդրիմադուզա(*Scotodrymadusa satunini*), Հայկական բնդեռնիկ (*Glaphyrus calvaster* Zaitzev), Սև անգղ(*Aegipus monachus*), Տափաստանային մկնաճուռակ(*Circus macrourus*), Տափաստանային մկնաճուռակ (*Glareola nordmanni*), Սատունինի սկոտոդրիմադուզա(*Scotodrymadusa satunini*) և այլն:

Որդան կարմիր միջատը (*Porphirophora hamelii*) համարվում է հազվագյուտ և անհետացող միջատ և ընգրկված է ՀՀ կարմիր գրքում:

Նախատեսվող գործունեության տարածքում գնմամբ կարմիր գրքային տեսակներ չեն հայտնաբերվել, հարակից գտնվում են գյուղատնտեսական նպատակով մշակվող հողամասեր:

2.8 Թափոնների կառավարում

Տարածքից աղբահանությունը կկատարվի կանոնավոր՝ պայմանագրային հիմունքներով: Շինարարական աշխատանքերի ընթացքում, առաջացող

Թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածակագիրը՝ 9120040001004/՝ 33.6 տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 120 խմ շինարարական աղբը /ծածակագիրը՝ 9120060101004/, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող (ծածկագիրը՝ 31401100 08 99 5) 29323 խմ ծավալով, կտեղափոխվի շինարարության թույլտվությամբ տրամադրված վայր:

Շահագործման փուլում տրանսֆորմատորային ենթակայանում առաջացող հատկությունը կորցրած բանեցված յուղերը /ծածակագիրը՝ 5410020702033/ կհավաքվեն մետաղյա տարողությունների մեջ և կհանձնվեն նշված թափոնների վերամշակմամբ զբաղվող ընկերություններին, հնարավոր վթարների ժամանակ յուղի արտահոսքը կանխելու նպատակով բետոնյա հարթակը ունի թեքություն հարթակի որոշակի հատված որտեղ էլ կկուտակվի յուղը, որտեղից կհավաքվի սորբենտով և կպահվի մետաղյա տարողության մեջ, հետագայում նույնպես կտրամադրվի վերամշակող ընկերության:

Խաղողի վերամշակման տնտեսության շահագործման փուլում կառաջանա գինեգործության նստվածքներ տարեկան մոտ 4200 կգ /ծածակագիրը՝ 1114130003004/, կօգտագործվի որպես պարարտանյութ:

3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարական հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շինարարական հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

3.1 ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

3.2 ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ (CO, NOx):

3.3 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

3.3.1 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով.
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

3.3.2 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադր:

3.3.3 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական գործընացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկական միջոցներ:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- Տարածքում առկա հողի բերրի շերտը պահպանելու նպատակով նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշմամբ հաստատված Հողի բերրի շերտի օգտագործման կարգով և 02.12.2017թ.-ի թիվ 1404 որոշմամբ, մասնավորապես նախատեսել հետևյալ միջոցառումները.

- Հողի բերրի շերտը հանել և պահպանել ծածկված վիճակում՝ բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը:
- Հողային աշխատանքների կատարման ընթացքում չօգտագործված հողի հանված բերրի շերտն անմիջապես դարսվում է լայնակույտերով:
- Լայնակույտերի բարձրությունը և ձևը պետք է բացառի հողատարման գործընթացների զարգացումը:
- Եթե հողի հանված բերրի շերտը նախատեսվում է պահել **2** տարին գերազանցող ժամկետով, ապա, ողողումը և հողմատարումը կանխելու համար, լայնակույտերի մակերևույթն ու թեքությունները ամրացվում են խոտացանքով կամ այլ եղանակներով: Թույլատրվում է լայնակույտի թեքությունների վրա ցանքսը կատարել հիդրոեղանակներով:
- Լայնակույտերը տեղադրվում տարածքում՝ բացառելով լայնակույտերի ջրածածկումը, աղակալումը, արդյունաբերական թափոններով և կոշտ առարկաներով, քարերով, խճով, ճալաքարով ու շինարարական աղբով աղտոտումը:

3.3.5 ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ

- Բուսականության պահպանում;
- Անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել ազդեցության ենթարկված բուսականության ջրցանման միջոցառումներ՝ բուսականության վրա նստած փոշին հեռացնելու նպատակով:
- Անհրաժեշտ է ապահովել տարածքում առկա բուսականության (եթե առկա են) ոռոգման միջոցառումները շինարարության ընթացքում:
- Անհրաժեշտ է բացառել տարածքում այն ծառերի և թփերի հատումը, որոնք նախագծի համաձայն ազդեցության չեն ենթարկվում:

3.3.6 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում):
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Շինարարական աշխատանքների ժամանակ՝
 - ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,
 - բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,
 - գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:
- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին

բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

- Նախատեսվող արտադրությունում առկա վտանգավոր օբյեկտները «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով կներկայացվեն տեխնիկական անվտանգության փորձաքննություններին;
- Անվտանգության նկատառումներից ելնելով շին.հրապարակում կտեղադրվեն կողմնակի անձանց մուտքը արգելող նշաններ, և շինհրապարակը կապահովվի լուսավորությամբ:
- Իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում ղեկավարվել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

3.3.5 ԱՂՄՈՒԿԻ և ԹՐԹՌՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաբար ստուգել և կարգադրել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

- Աղմուկի աղբյուր կարելի է համարել շինարարական տեխնիկայի աշխատանքի արդյունքում առաջացող աղմուկը: Աղմուկի մակարդակը չպետք է գերազանցի ՀՀ-ում գործող սանիտարական նորմերը աշխատատեղերի համար, որը սահմանված է 80 դԲա:

4. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ;
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ;
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
5. Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների,
6. Նախատեսվող կանաչապատման աշխատանքներն իրականացնել Կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշման դրույթներով:
7. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:
8. Փոխարինել կպչողականություն չունեցող ծառերը նորերով:
9. Տվյալ և հարակից տարածքներում կեղսաբազմազանության մոնիթորինգ 3 ամիս մեկ հաճախականությամբ:

ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարության ընթացքում հատկացնել 3720000 դրամ:

Մշտադիտարկում և բնապահպանական միջոցառումներ, շին. փուլ/ դրամ		
Տարածքի ջրցան փոշեգոյացումը կանխելու նպատակով	600000	600000
Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;	72x35000	2520000
Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:	24x25000	600000
Ամբողջ շինարարության համար		3720000

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախազգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար՝ Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով (b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով (c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի: (d) Շինարարության ընթացքում համաձայն մթնոլորտային օդի պահպանության մասին օրենքի, փոշեգոյացումը կանխելու նպատակով շենքերը կծածկվեն անթափանց թաղանթով
	Աղմուկ	(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում (b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականության սնվող սարքերը պետք է ծածկվեն:

	<p>Թափոնների կառավարում</p>	<p>(a) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:</p> <p>(b) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից</p> <p>(c) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն</p>
<p>Կեղտաջրերի հեռացում</p>	<p>Ջրի որակ</p>	<p>(a) Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով ավտոցիստեռներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոգուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով,;</p> <p>(b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն նախատեսված տարածքներում, որտեղից ջրի արտահոսք չի լինի:</p> <p>(c) Շինհրապարակից ելքի ժամանակ լվացվում են տեխնիկական միջոցների անվաղողերը: Պարզաբանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:</p>
<p>Հետիոտների և երթևեկության ապահովություն</p>	<p>Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ</p>	<p>(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.</p> <ul style="list-style-type: none"> ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում: ▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին: ▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար. ▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում:

<p>Արտակարգ իրավիճակների կառավարում</p>	<p>Շինարարական աշխատանքների հետևանքով արտակարգ իրավիճակների կառավարում</p>	<ul style="list-style-type: none"> - Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում; - Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը; - Շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, հրշեջ հիդրանտներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն: - Մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար: - Հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում՝ ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ - Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագություն, անհողմություն, մառախուղ) դեպքում աշխատանքներն իրականացնել պահպանելով անվտանգության բոլոր կանոնները կամ շին. աշխատանքները դադարեցնել մինչ օդերևութաբանական պայմանները կլինեն բարենպաստ աշխատանքները վերսկսելու համար:
---	--	---

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում 	<ul style="list-style-type: none"> - Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ 	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում 	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու
Իներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար
Կենցաղային աղբի	- Աղբամանների տեղադրում	Շինհրապարակ	Արտաքին գնում	Շինարարության	Կապալառու,

առաջացում	շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն ադրի մշտական տեղակայման վերաբերյալ			ողջ ընթացքում	քաղաքապե- տարանի վերահսկողու թյուն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու
Կանաչապատում	Տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականության տնկում	Մեփական տարածք	Արտաքին զննում	մշտական	Կապալառու

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- 1.** СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
- 2.** Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
- 3.** Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶ

ՀԱՄԱՅՆՔ ՄԵԾԱՄՈՐ

Ն Ա Խ Ա Գ Ծ Ա Ս Ա Ն Թ ՈՒ Թ Յ Լ Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(ՀԱՐՏԱՐԱՊԵՏԱԶՄԱՍԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱՂԴԱՆՔ)

N 03 « 05 » 01 2023թ.

Օբյեկտ	<i>Նաղդդի վերակազմման տնտեսություն</i>	ճարտարապետական փաստաթղթերի մշակման համար
<small>(օբյեկտի անվանումը, կտուցում, վերակառուցում, վերանորոգում, ուժեղացում, վերակազմում, գործառնական նշանակության փոփոխություն)</small>		
<i>Երկու փուլով՝ «Նախագիծ» և «Աշխատանքային փաստաթղթեր» նախագծային փաստաթղթերի մշակման համար (ՀՀ կառավարության 19.03.2015թ. հ.596 որոշման N 4 հավելված N 3 ցանկով տրված չափորոշիչներից էլենելով , բարձր սիսկայնության օբյեկտ՝ IV կատեգորիա)</i>		
Գտնվելու վայրը	<i>Մարզ Արմավիր, համայնք Մեծամոր գյուղ Նոր Արմավիր Մ.Մաշտոցի փողոց 30 հողամաս, Մ.Մաշտոցի փողոց 30/1</i>	
<small>(հակիրճ բնորոշումը, հզորությունը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), մակագման փուլերը և այլն)</small>		
Կառուցապատող	<i>«ՌԻԴ» ՍՊԸ</i>	
<small>(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)</small>		
Առաջադրանքի տրամադրման հիմքը	<i>Կառուցապատող «ՌԻԴ» ՍՊԸ հայտը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.17082022-04-0049, և հ. 17082022-04-0031 վկայականները, նախագծի էսքիզային առաջարկը</i>	
<small>(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրում, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթեր)</small>		
Առաջադրանքի գործողության ժամկետը	<i>Երկու տարի:</i>	
<small>(ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N1 հավելվածի 31-րդ կետին համապատասխան)</small>		
Ն Ա Խ Ա Գ Ծ Ա Ս Ա Ն Թ ՈՒ Թ Յ Լ Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն (աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)		
1. Հողամասը գտնվում է	<i>Նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն, կադաստրային ծածկագրերը՝ 04-071-0101-0011, 04-071-0101-0002:</i>	
<small>(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)</small>		
2. (*) Հողամասի չափերը	<i>4.8868 հա+4.7144 հա:</i>	
<small>(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշանարմամբ, մակերեսը, (հա)</small>		
3. Հողամասի առկա վիճակը	<i>Չկառուցապատված բլրածև հողատարածքներ :</i>	
<small>(ոչխիֆի բնորոշումը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործում, նշանակություն, հարկայնություն, շինարարական նյութերը և այլն), կամուրջատուր, բարեկարգում և այլն)</small>		
4. (*) Տրանսպորտային պայմանները	<i>Ներցուղական ճանապարհներ:</i>	
<small>(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)</small>		
5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ	<i>10 ԳՎ լարմամբ էլեկտրամատակարարման գծեր</i>	
<small>(ջրամատակարարման, կադաստր, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)</small>		
6. (*) Կից հողամասեր	<i>Գյուղատնտեսական նշանակության հողամասեր</i>	
<small>(կից հողօգտագործման անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)</small>		
7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)	<i>Առկա չէ:</i>	
8. (*) Հատակագծային սահմանափակումներ	<i>Բացակայում են</i>	
<small>(տեղանքում գործող արտադրական, պաշտպանող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)</small>		
Ն Ա Խ Ա Գ Ծ Ա Ս Ա Ն Թ ՈՒ Թ Յ Լ Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն (աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)		
9. Ճարտարապետահատակագծային պահանջներ	<i>Մշակել Մարզ Արմավիր, համայնք Մեծամոր գյուղ Նոր Արմավիր Մ.Մաշտոցի փողոց 30 հողամաս, Մ.Մաշտոցի փողոց 30/1 հասցեներում խաղողի վերակազմման տնտեսության նախագիծ՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.17082022-04-0049 և հ.17082022-04-0031 վկայականներով ամրագրված հողատարածքների սահմաններում:</i>	
<small>(ելենելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկություններ ձևակառուցողի ձևավորման, տանիքների, արտաքին դռների, պատուհանների համաձայնությունների և գունային լուծումների վերաբերյալ)</small>		
9.1. (*) Օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)	<i>Սահմանված չէն</i>	
9.2. (*) հեռավորությունը հարևան հողատարածքից (օբյեկտներից) (մետր)	<i>Հստ որոնատիվ պահանջների</i>	
9.3. Թույլատրելի բարձրությունը (մետր)	<i>Նաղդդի վերակազմման տնտեսությունում ընդգրկված կառույցները նախագծել մինչև երեք հարկանի ներառյալ, հնարավոր է նախատեսել նկուղային հարկեր և կիսանկուղային հարկեր: Հնարավոր է նկուղային /կիսանկուղային / հարկի տակ նախատեսել տեխնիկական հարկ:</i>	
<small>սահմանային հարկայնության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀ ԿՊ-6-02-2006 «Մեխանիկայի շինարարություն. Նախագծման կոդեր» շինարարական նորմերով սահմանված պահանջների պահանջով (հատուկ հաշվարկային մեթոդներ, սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն)</small>		
9.4. Կառուցապատման խտության գործակիցը	<i>Սահմանված չէ</i>	
<small>(կառուցել (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)</small>		
9.5. Կառուցապատման տոկոսը	<i>Կառույցների և անջրաթափանց ծածկույթների համար մինչև 55%: Ջրային մակերեսների համար մինչև 10 % :</i>	
<small>(կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%)</small>		
9.6. Կամուրջապատման տոկոսը	<i>Կանաչապատումը իրականացնել գյուղատնտեսական և պտղաբուծական բույսերի միջոցով /պիտանային տոկոսը՝ 10 %/</i>	
<small>(կամուրջապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%)</small>		

9.7. այլ պահանջներ

- Նախարարի վերահսկման տնտեսության կազմում հնարավոր է նախատեսել գինու արտադրամաս, տեխնիկական սարքավորումների համար տարածքներ, պահեստներ, անձնակազմի կամար կացարան, պահակակետ:
- Նախատեսել բացօթյա հակահրդեհային տարադրություններ:
- Հաստատվածային լուծումները մշակել համաձայն պատվիրատուի առաջադրանքի, հաշվի առնելով նորմատիվային պահանջները:
- Հնարավոր է նախատեսել հողամասերի պարսպապատում տարբեր կոմպլեքսից:
- Հնարավոր է նախատեսել մեքենաների համար բացօթյա և փակ կայանատեղիներ:

10. Հողամասում գտնվող շենքերի և շինությունների քանդում կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

Ըստ պատվիրատուի առաջադրանքի

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրամատակարարում

Ջրամատակարարումը՝ հորից, կոյուղին՝ մարդիկ կատուցների միջոցով (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ կողմից տրված 25.10.2022թ. հ.ՏԳ-180-6(10)/0457 տեխնիկական պայմանների (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Արմավիրի գազաֆիկացման և գազամատակարարության ծրագրի շրջանակում տրված 12.08.2022թ. հ.01-02/1403 տեխնիկական պայմանների (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադրիչը

GSM կապ (համաձայն ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված կալիտային տվյալների)

12.5. քույլ հուսանքներ

12.6. աղբահանություն

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում

Կազմակերպել ջրահեռացում:

(տեխնիկական կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում

Կանաչապատումը իրականացնել գյուղատնտեսական և պտղաբուծական բույսերի միջոցով

15. Շինարարական նյութեր

(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական վնասներ, ցանկապատում, գրվածք և այլն)

Երկաթբետոն, մետաղ, սպալկի, սրբատաշ և կոպտատաշ բարե շար, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր:

16. Պաշտպանական կառույցներ

(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տանիքների, ձակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)

Նախատեսված չեն

17. Հակահրդեհային պահանջներ

(արականյալից իրավիճակներում մարդկանց օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

Ապահովել հակահրդեհային նորմատիվ պահանջները, ապահովել հրդեհ հիդրանտների առկայությունը:

(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

Ըստ նորմատիվ պահանջների

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ

19. Շրջակա միջավայրի պահպանում

Ապահովել շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու համապատասխան միջոցառումներ:

(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում

Մշակել շինարարական աշխատանքների կազմակերպման նախագիծ՝ նկատի ունենալով ՀՀ կառավարության 12.04.2001թ. հ.286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի «ԺԲ» ենթակետի և 44.1 կետի պահանջները:

(ստացարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և արհեստագործի անվտանգ աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը

Երկու տարի՝ «Նախագիծ» փուլի համար:

(Ըշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

Լ Բ Ա Յ Ո Ւ Յ Ի Չ Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ը

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ

ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված N 2-ի համաձայն՝ պետական համայնքի փորձաքննություն, այդ թվում՝ ՀՀ բնապահպանության նախարարության շրջակա միջավայրի վրա ազդեցության:

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ երոս կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի հետ:

(իրավաստ մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ շահագրգիռ մարմինների հետ էսթիմացիային նախագծի նախնական փուլում և հետագայում՝ համաձայնեցումների և առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված կերպով)

24. Հասարակական քննարկումներ

Անհրաժեշտության դեպքում

• Համաձայնեցում Մեծամոր համայնքի ղեկավարի հետ

(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

25. Համաձայնեցումներ

Նախագծի կազմը և բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ կառավարության

առնչված քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները և ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006թ. հ.273-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» հ.128-Ն հրամանով հաստատված դրույթներին:



Handwritten signature in blue ink.

Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ



R=500000

Nor Armavir Նոր Արմավիր
Nor Armavir

Bambakashat

Ջրակա

Jrash



